

ՀԵԶՈՒԱԳԻՑՈՒԱՆ

Հ Ա Յ Ե Բ Ե Ն Ն Ո Ր Բ Ա Ռ Ե Ր

Ս. Ե Փ Ր Ե Մ Ի Մ Ա Տ Ե Խ Ա Գ Ր Ո Ւ Թ Ե Ա Ն Յ Ց Մ Է Զ

(Տար. Վ. Հ Ա Յ Ե Ն Ի 1886)

=====

(Շաբ. տիս Բազմավէպ, 1926, էլ 46)

17. Պարէ

Եւ ոչ պատրեաց զմեզ ուղեղ (?) պարգայն նորա և ոչ խստղեաց զմեզ ասստկոթիւն պարէիցն նորա և ոչ կափոյց զմեզ որոպայթ մենքենայիցն նորա և ոչ թագաւորեաց ի միջի մերում սպանող գեղարդն նորա (հա. Բ. էջ 241):

Կը կարծեմ որ պէտք է ուղղել պարսիցն «պարսատիկներու», որուն յարմար կու գայ սաստկոթիւն յատկացեալը. բայց անյարմար կը թուի խստիկաց բայց. ասիկա կը պահանջէ սիրտ շոյող, հաճելի բան մը. ուստի կարելի է որ պէտք է կարդալ սաստկոթիւն պարէիցն (դրամի, ստացուածքի, կաշառիք առաստոթիւնը մեզ չզրգուեց): Բնագիրը կրնայ վճռել խնդիրը:

•

18. Ռաբունայ

Այն որ նա ինքնին օծ և զրոշմաց զմեզ ի ձեռն ուարունային Հոգւոյն՝ զոր ետ ի սիրտս ձեր (հա. Գ. էջ 88):

Այս բառը ծանօթ էր մեզ միայն մէկ վկայութեամբ, ուր սակայն թէ ձեռվ և թէ նշանակութեամբ անստոյդ է. «Եւ ի ձեռին նոցա զանշուշտ որունայն» (Եղիշ. ը. էջ 118, այլ ձ. ուարունայ, ըորունայ), Հին բառարանը ասիկա կը մեկնէր «պըսակ»: Ծրունայն ասաց (ոմն), թէ չէ պարսիկ (բառ). բայց յայտ է ի նախատես բանից մողկեսին, զի պսակն է: Ասոր հետեւով նշի և Զախիջախեան կը դնեն «բրաբիոն», բրաբիոնեան պսակ»: Առձեռնը ունի «առհաւատչեայ»:

ՄԱՐՏ

Բառիս կասկածական նշանակութեան վրայ լոյս կը սփռէ Եփրեմի վերի վկայութիւնը, որ առնուած է Բ. Կոր. Ա. 22 համարէն. ասիկա մեր թարգմանութեան մէջ հետեւալ ձեռվ է. Եւ որ օծ զմեզ՝ Աստուած է. որ և կնքեաց զմեզ և ետ զառհաւատչեայ Հոգւոյն ի սիրոս մեր (յն. ուն ձիջաթնա): Այս համեմատութենէն կ'երեւայ որ սարունայ կը նշանակէ «առհաւատչեայ», ինչ որ կը հաստատէ նաև բառին ծագումը, հմմտ. ասոր. րահեօնա «գրաւ, աւանդ»: հայերէն բառը ասորերէնէ փոխառեալ է (Հիւալշ. Արմ. Gram. 316), հետեւարար և ուղղագոյն ձեւ սարունայ է:

19. Տեռն

Եւ արդ զիսոզսն՝ որ պեղնն համարեալ են արարչին՝ ներձոյց, և արար կամն և դիւացն, և արկ տուգանս ի վերայ տեսն երամակին, և գեցն զիտացին զանջիչն իւրեանց (հա. Բ. էջ 69):

Անծանօթ և անստոյդ բառ է. թոփ թէ երամակին ածականն է և կը նշանակէ «պիղծ, անմարուր»: Բայց կրնայ ըլլալ որ հասարակ համառօտագրութիւն մ'ըլլայ, փորանակ տեսան, և այս աւելի հաւանական է: Ասորի բնագրին համեմատութիւնը պիտի ինդիրը:

20. Յմալիխւլ

Յիւղ յորժամ արկանէ վարդ՝ լինի վարդիս. և եթէ ցմախ արկանէ՝ լինի ցմախիս. իսկ եթէ խնդամոլ արկցէ՝ լինի խնդամոխիս (հա. Գ. էջ 102):

Կը նշանակէ «ցմախ բրոյով (ըստ Հայրուսակ & 3022 cucubalus behen, siliqua inflata, gypsophile) պատրաստուած իւղ»: Ցպազրին մէջ երեքն ալ իրրե առանձին բառեր առնելով զրուած է ցմախ իսդ, վարդ իսդ, խնդամոլ իսդ, մինչդեռ պէտք է միացնել և իրրե նոր բառեր մոցնել բառարանի մէջ:

21. Քող

Եկի հասի ի վերայ քոյ, և տեսի զբեզ
զի հասեալ էր ժամանակ քոյ և ժամ քողաց
քոյ (Հա. թ. էջ 305):

Հատուածս առնուած է Եզեկիէլի մար-
գարէութենէն (Ժ. 8), որ մեր թարգ-
մանութեան մէջ սապէս է. «Ճեսի զբեզ
զի հասեալ էր ժամանակ քոյ և ժամանակ
խտիտղաց քոյց»: Երբայական բնագիրը
սուրագծեալ բառին տեղ ունի ԾՂԴ ձօ-
ճիմ «սիրոյ, կրից, տոփանաց», ուստի
Եփրեմի յիշեալ քոյ բառը պիտի առնենց
իրբ «տոփի»:

Փողովդայական բարբառներու մէջ անա-
սուններու մերձաւորութեան համար զոր-
ծածուած բառերը նոյն իսկ անասուններու
անուններն են. ինչպէս ցուզ գալ, ցուզ
առնել, ցուզ ուտել կամ ցրայ. «կովի խառնը»,
բայս գալ «նոյն նշ.» (Թրգ. ԽՍՅԱ ցուզ
բառէն), բների գալ, բներով գալ, բներալ
«շանց խառնը» (քեր «էգ շուն» բառէն),
այսպէս ալ ունինք քաղ գալ, քաղ ուտել,
քաղալ «էգ այժին մերձաւորութիւնը», որ
կազմուած ի քաղ «արու այծ» բառէն:
Այսունեւու այս բառերը իրենց նախնա-
կան նշանակութիւնն փոխելով՝ ընդհան-
րացած են. ցլալը միայն կովի համար չէ,
այլ նաև կատուի համար (թուլանը),
քաղ ուտելը միայն այժի համար չէ, այլ
և կովին ու մաքիին համար, քոնթալը
միայն շան չէ, այլ գայլի, արջի, նաև
էշի համար: Նոյն իսկ մարդու համար
Ամբատի գատաստանազրին մէջ ունինց
ցոյն, իրբ և կնոջ մը ապօրինի սիրականը,
տոփովը» (Երար. Karst, էջ 120, 121):
Այս բոլոր ըսածներէն կը հետեւի թէ Եփ-
րեմի յիշեալ քոյ բառը պէտք է սրբագրել
բաղ «առիփի, խառնը» և թէ այս քաղը
ծանօթ քաղ «արու այծ» բառին մէկ
առութմ է միայն:

Բառարանները Եփրեմի յիշեալ բառը
հասկած են անշուշաց քոյ «ծածկոյթ»
և անշուշաղիք անցած. բայց այս պարու-
գային սեռական պիտի ըլլար քողոց. ուրբ-

րազբելով բաղ, բառին աց վերջաւորութիւնը
կ'արդարանայ:

Գաղ բառին «խառնը» նշանակութիւնը
ինծի աւելի հնուու կ'առաջնորդէ: Կը կար-
ծեմ որ հյ. քաղոց ամսանունն ալ ասկէ
կազմուած է, իրբ անասնոց խառնից
ժամանակը կամ ամիսը:

Գիտենք որ մեր անշարժ տոմարով
քաղոցը կը համապատասխանէ զեկոտ. Զ-
յունվար 7, որ հյա երկրի համար խառ-
նից ամիսը չէ: Բայց անշարժ տոմարը
յետին գործ է. աւելի առաջ տոմարը
քարֆական էր և այն ժամանակ՝ երբ առա-
ջին անգամ ամսանունները զուռեցան,
հարկաւ անոնց պիտի պատասխանէին եղա-
նակին: Մեր 12 ամսանուններուն մէջ
նաւասարդ (պըս. նոր տարի), հոսի (Վրաց.
երկրորդ ամիս), սահմի (Վրաց. երրորդ
ամիս) են. հղանակ ցոյց տուող բառեր չեն.
միայն քաղոցն է՝ որ իմ այս մելինութեան՝
կը զառնայ եղանակ ցոյց տուող բառ մը,
և երկրորդ՝ արհց ամիսը, որ նշանակելով
ժարե, արեգակն, անշուշտ յարմար է
միայն յունիս կամ յուլիս ամիսներուն:
Գուցէ քաղոց բառին համար տուած մեկ-
նութիւնս կասկածելի ըլլար. բայց արեգ
ամիսը միայն, յունիս - յուլիսին յարմա-
րելու հանգամանքը կը ցոյցնէ և կը հաս-
տատէ որ ենթարրութիւնս ծիշտ է:

Հիմա պէտց է փնտուել թէ ո՞ր թուին
է որ քաղոց ամիսը մարտին կ'իյնայ: Տոմարական հաշիւները կը ցուցնեն որ
նաւասարդի մէկը նոյեմբերի մէկին եկած
է 1560 թուին. հետեւարար նոյն հայկա-
կան տարուց քաղոցի մէկը եղած է 1561
թուի մարտի մէկին: Անկէ աւելի առաջ
մինչև Ե. գար՝ երբ աւանդուած են մեզ
մեր ամսանունները իրբ արդէն պատրաստ
տոմար, երբեց քաղոցը մարտին պատա-
հած չէ: Ես երթարլվ 1560 թուէն մէկ
Հայկաց շըջան (1460 տարի), կը գտնենց
որ մէկ անգամ ալ քաղոցը մարտին հան-
գիպած է Յ. թ. 100 թուին, ուստի Յ.
թ. 100 բուսականին և որ դրուած է քաղոց
բառը կամ նոյն է ըսել թէ այս բուսականին
և որ կազմուած է հայկական տոմարը:

Ահա այսպէսով մնաց կը հասնինք անսպասելի, անսկնկալ եզրակացութեան մը. — հայերէն բարի գործածութեան վկայութիւնը թ. թ. 100 թուականին, թակեցարէն 300 տարի առաջ, հսութիւն մը՝ որուն հասած չեն երբեց ոչ մեր ձեռագիրները, ոչ մեր արձանազրութիւնները և ոչ աւ ուրիշ ազգերու հին հին յիշատակարանները:

22. Օրայ

Քարոզեաց Յովան գկործանումն ի վերայ Նինուէացոցն. արկ ի նոսա սոսկումն և Պղողումն, և սերմաննեաց ի նոսա հիացումն. և ետուն նոցա նմա օրայ զապաշաւ ողոց և պառու ապաշխարութեան (հատ. թ. էջ 2).

Թերեւս որայ բառն է իրը հոմանիշ պառու ձերին: Բնագրին համեմատութիւնը հոս բոլորովին անհրաժեշտ է:

* * *

Ս. Եփրեմի Խոստովանութեան մէջ՝ որ հրատարակուած է վերոյշեալ Գիրք Աղօթից մէջ (տպ. Երրուադէմ 1870), կը գտնեմ ես երեց բառ, որոնք են.

1. Ժամարճակ «Ժամասացութեան վերջը, ժամէն արձակուիլը». Մեղայ... անյագ ուսեկով, զորովայնս խնդղելով, առանց ժամի և ժամարճակի ճաշակելով, զպահն արհամարհելով (էջ 20): Ասկէ կ'երեւայ նաև որ ժամասացութեան միջոցին ճաշելը մեղը կը համարուէր:

2. Ճասազայրառու «ճառազայթ տուող, շող արձակող»: Ճրագ ճշմարտութեան և ճառազայթատու, մերկեա յինէն զիաւար մթացեալ մեղաց (էջ 26):

3. Վաճառասիրիկ «շահափառութիւն ընել». Մեղուցեալ եմ Աստուծոյ ազահութեամբ և արձաթսիրութեամբ, խարելով, աւելի առնելով և պակաս տալով, վաճառասիրելով, կծծելով, զաղտ գողնալով (էջ 20):

Հ. Ազաթնաւ

Վերջ

«ԽՈՂՀԱՐԱՐ»

«ԲԱՋՄԱՎԵՒՇ»ի Փետրուարի պղակին մէջ հանդիպեցայ Պր. Աճառեանի Ա. Եփրեմի Ճառերուն մէջ զտած՝ «Խոր բառերու» շարքին՝ և Խոհարար բառո, որու բացատրութիւնն անորոշ թողուած է:

Այդ բառը իմ մտքին ալ շփոթութիւն պատճառեց, երբ Հոռմի Խոտիսոսո թիրիկօ Աստուածանչի Հիմարկութեան Պրոֆ. Յ. Մարէտուի խնդրանոց յիշեալ Յովնանու ձափի խալերէն թարգմանութիւնն ըրի: Երբ զարմանցս բացատրեցի ասորագէտ Պրոֆեսորին՝ մատելով ասաց, որ բնագրին մէջն ալ Խոհարար է:

Խակայն ասորերէնն կրկնիմաստ է. և կը նշանակէ թէ կերակուր եփող և թէ Դատաւոր և զահիճ: Այսինքն իրեն բարութեամբը սարսափահար նինուէացւոց մէջ՝ Երվանն սարսափեցուցիչ զատաւորի մը պէս կանգնած կը նկատէ, և զահճի մը սպաննական ձերի մէջ իրը թէ ասէ: Եթեր օրէն նինուէ կը կործանի եթէ չապաշիւրէց:

Երկիրէն աննկարազրելի եղած է, որ մինչև անգամ անասուններուն ալ ծոռմանկալ տուած են, և արդիւնաւոր եղած պիտի ըլլայ՝ ատանց պատճառն հասկանալու և ի շինութիւն պահել տուողներուն:

Հ. Գ. Ն.

Գ. Բ. Կ. Ա. Ն

ԽԾՆՈՒՄ ԳԵՐԵԶՄԱՆՆՈՅԻ ՄԵՋ

Ճ Ճ

Տատրակներուն աշխան է սև նուիներէն, Որոնց անշան ոսաւիւնի մէջ կ'օրորէն Գորը ու մերմակ շիրմացարերը մարմարեայ, Իրենաւոյսն եղաց մը վանկն է սոկեցն Որ ըստուերին մանէշակին մէջ կը զոյայ...

Ահ, ըսդիմանալ ճամբան որ մեզ կ'առանորդէ, ինչպէս լուսինը ցայտածամ իր արծաթէ: Գերեզմանէն Անժանօթին ցընորական.